



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18644

ՀՕԿ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ, ԹԻԻ 5

ԼԻՏՎԻՆՈՎ,

ՄԵԶ ՀԱՐԿԱԻՈՐ Է ԱՊԱՅՈՎՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԻՑ

Մաքսիմ Լիովինովի ճառերը ժնեվի Զինաթափման
Համաժողովին եւ ամերիկեան քաղաքացիներու
ի պատիւ Լիովինովի տաժ նախանաչին

ԳԻՆ 5 ՍԵՆԹ

ՆԻԻ ԵՈՐՔ

1931

18644

10 3 MAY 2013

15 JAN 2010

27 SEP 2000

327(47)

L-63

wm

1010 4092
4197X

Handwritten scribbles and lines



ՄԱՐՍԻՄ ԼԻՏՎԻՆՈՎ,



Խորհ. Միության Արտաքին Գործոց Կոմիսար

~~6889~~

ՄԵԶ ՀԱՐԿԱԻՈՐ Է ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՎՏԱՆԳԻՑ

ԺՆԵՎ. — Ձինաթափման համաժողովի նիստում հե-
տեւեալ ճառով հանդէս եկաւ խորհրդային պատուիրա-
կութեան նախագահ Ընկ. Լիտվինովը:

Նախագահը եւ նախորդ մի քանի այլ հոետորները
նշեցին, որ այս համաժողովը իր նախորդը չի ունեցել
մարդկութեան պատմութեան մէջ: Կարծում եմ, որ կը
լինեն ժարդիկ, որոնք չեն համաձայնի դրա հետ: Համա-
ժողովը իր նախորդը չունի ոչ այնքան նրան մասնակցող
պետութիւնների քանակով, այլ, գլխաւորապէս մարդ-
կութեան նրան ներկայացրած պահանջների մեծութեամբ
եւ կարեւորութեամբ, որոնց ելքը կարող է այս կամ այն
ընթացքն ստանալ: Համաժողովի հրաւիրումը հանդիսա-
նում է երկարատեւ, մեր կարծիքով չափազանց երկարա-
տեւ, նախապատրաստական աշխատանքների արդիւնք:
Ներկա համաժողովն դէմ առ դէմ կանգնած է զինաթափ-
ման խնդրի առաջ, որը պէտք է դործնական լուծումն ըս-
տանա առանց յետադա յետաձգումների, առանց յապա-
ղումների: Այս համաժողովի հիմքերը դրել են համաշ-
խարհային պատերազմի ժամանակ: Արդէն հէնց պատե-
րազմի ժամանակ բարձրաձայն բողոքներ էին լսում նրա
դէմ, հնչում էր պատերազմ պատերազմին լողուցը: Այդ
պատերազմը կարողացաւ շարունակել միմիայն շնորհիւ
այն լողունգի, որի համաձայն այդ պատերազմը պէտք է
վերջին պատերազմը լինէր: Սակայն միջադպային յարա-



բերութիւններէ հետ պատերազմեան պատմութիւնը բնորոշուած է կապիտալիստական պետութիւններէ զինեալ ուժերի, սխտեմատիկ, անընդհատ աճամբ եւ միլիտարիզմի լծի աւելացումով: Հենց Աղգերի Լիգայի ստեղծումը հանդիսանում է ոչ այլ ինչ, եթէ ոչ մի թեթեւ սուրբ, ժողովրդական պահանջների հանդէպ՝ կատարելու կառավարութիւնների տւած խոստումը «վերջին պատերազմի» մասին: Պատերազմին յաջորդող ընդհանուր աղքատացման տարիները, պատերազմի մասնակիցներին — ինչպէս յաղթող, նոյնպէս եւ պարտուած երկրներին — հասցւած վէճերի բուժման տարիներն ուժեղացրին ըստպառազինման դադարեցման պահանջները: Այդ պահանջները չեն կարող բաւարարել սպառազինումների կայունացումով, սպառազինումների աննշան կրճատումով կամ բիւջետային խնայողութիւններով, այլ միմիայն պատերազմի ինստիտուտի ոչնչացման միջոցների որոնմամբ:

Սորհրդային կառավարութիւնն, իր գոյութեան առաջին օրերից, ոչ միայն խօսքով, այլ դործով դատապարտեց պատերազմը, որպէս ազգային քաղաքականութեան ղէնք, դէմ արտայայտեց ամեն տեսակ պատերազմական սուղանքների եւ տերիտորիալ նւաճումների ու յայտարարեց ժողովուրդների ինքնորոշման լողունը: Նա իր սեփական քաղաքականութեամբ խստօրէն եւ հետեւողականօրէն կիրառում է խաղաղ եւ չեղոք դործակցութեան դիժը միւս ժողովուրդների հետ: Ժխտելով պատերազմը որպէս ազգային քաղաքականութեան ղէնք, նա չի տեսել եւ չի տեսնում բանակի եւ այլ զինեալ ուժերի պահանջման կարիքը: Տասը տարի առաջ, աչնան, առաջին անգամը մասնակիցելով միջազգային համաժողովին, Ջենովայում, նա առաջարկեց լիակատար եւ ընդհանուր դիմաթափութիւն, որպէս պատերազմի ոչնչացման միակ միջոցը: Նախապատրաստական յանձնաժողովի խորհրդա-

յին պատերազմութիւնը պնդեց այդ առաջարկի արագ լրականացման անհրաժեշտութեան վրա: Պատերազմութիւնը մատնանչեց նոր պատերազմների սպառնացող վտանգը: Նա սպառնացեց, որ երկրների մեծ մասում դոյութիւն ունեցող վտանգի կանխման միակ միջոցը լիակատար դիմաթափութիւնն է, որ ոչ մի դաշնագիր, պայմանագիր, արձանագրութիւն, միջազգային կազմակերպութիւն չեն կարող իսկական ապահովութիւն ստեղծել առանձին ժողովուրդների համար: Մեր մատնանչումները նոր, մօտալուտ պատերազմի հնարաւորութեան մասին՝ ծաղրում էին: Մեղ մեղադրում էին անսահման յոռեակտութեան եւ վտանգի մեծացման մէջ: Այդ վէճից ընդամենն անցել է մի քանի տարի եւ ի՞նչ ենք մենք տեսնում: Զինաթափման համաժողովը հարկադրած է բացել քննաթղթերի որոտի եւ օդամուտային ուսման պայթիւնի տակ: Դա դեռ տեղի է ունենում Ժնեւից հեռու, Եւրոպայից հեռու, սակայն ո՞վ է այն լաւատեսը, որը կարողանա բարեխղճօրէն պնդել, թէ սկսած ռազմական գործողութիւնները կը սահմանափակեն միայն երկու կողմերով, միայն մէկ մայր ցամաքով: Ո՞վ է այն լաւատեսը, որ կը համարձակի հաւաստիացնել մեզ, թէ Հեռաւոր Արեւելքում տեղի ունեցող ղէպքերը չեն կարող դառնալ ըսկիզբը մի նոր պատերազմի, որն իր ընդարձակութեամբ, տարածումով եւ սարսափներով, շնորհիւ նոր տեխնիկական կատարելագործումների, չի նսեմացնի վերջին պատերազմի տխուր հոչակը: Հենց Եւրոպայում դժւար թէ գտնեն շատ հարեւաններ, որոնք լուրջ սահմանային հաշիւներ չունենան միմեանց հետ: Ի՞նչ երաշխիք կա, որ այդ բոլոր հաշիւները ընդհանուր եռացող կաթսայի մէջ չեն նետուի, եթէ եւրոպական պետութիւններից թեկուզ որեւէ մէկը պատերազմին խառնուի: Կարելի է վստահ լինել, որ պատերազմներ չեն ծագի երկրաբանի միւս ան-

կիւններում : Ի՞նչը կարող է խանգարել դրան : Միջազգային կազմակերպութիւնները, դաշնագրերը : Մակայն մենք տեսնում ենք, որ դրանք չկարողացան կանխել, կամ դադարեցնել ռազմական գործողութիւնները եւ դրանից քղիտող բոլոր հետեւանքները Հեռաւոր Արեւելքում : Հասարակական կարծիքը : Նա աւելի անդորր է : Բայց ի՞նչ բան է հասարակական կարծիքը : Ե՞րբ, ո՞րտեղ է նա միասնական եղել, միասնական նպատակի ծառայել : Մամուլում, հասարակական կազմակերպութիւններում իր արտայայտութիւնը գտած հասարակական կարծիքը ծառայել է զանազան երկրների զանազան ու բազմազան շահերին, եւ այդ երկրների ներսում — առանձին կապիտալիստական խմբաւորումների, առանձին ձեռնարկութիւնների եւ առանձին անձանց շահերին : Մի՞թէ մեր աչքերի առաջ Հեռաւոր Արեւելքում կատարող գործողութիւնները, նոյնիսկ անմիջապէս չահազդուած երկրներից դուրս, չե՞ն գտել իրենց պաշտպանները, իրենց հրահրողները : Մի՞թէ վերջին ժամանակներս Եւրոպական եւ ամերիկեան մամուլում չե՞ն երեւացել յօդածներ, որոնք մատնանշում են Հեռաւոր Արեւելքի հրդեհի ծաւալման անհրաժեշտութիւնն ու օգտաւէտութիւնը, որոնք պատերազմը համարում են ելք ներկա ճգնաժամից, այն ճգնաժամից, որի սրութիւնը չի կարելի չբացատրել վերջին պատերազմով, նրա հետեւանքներով :

Նոր պատերազմների առաջ գալուն չի կարող խանգարել նաեւ սպառազինման սահմանափակումը : Ներկայումս բոլոր պետութիւններն էլ բաւականին յագեցած են զէնքով, եւ այն էլ բաւական սուր եւ բաւական աւերիչ զէնքով, որպէսզի մղեն այնպիսի պատերազմ, որի համեմատութեամբ համաշխարհային պատերազմը երեսնամյակն իսաղաքից պէտք է հաշուել :

Մեզ պատերազմից չի ապահովում նաեւ սպառազին-

ման կրճատումը, եթէ այդ կրճատումը չի կատարւում նշանակալից չափով եւ գիտակցաբար՝ այն հաշուով, որպէսզի դժւարացնի պատերազմը :

Պէտք է կրկնեմ, որ խորհրդային պատւիրակութեան համար համաժողովին առաջ դրած խնդիրը կարող է բրնորոշել կարճ, երկու խօսքով — Ա.Ը.Ա.Հ.Ո.Վ.Ո.Ի.Թ.Ի.Ի.Ն. ՊԱՏԵՐԱԶՄԻ Վ.ՏԱՆԳԻՑ : Դրանով ապահովութեան մեր ըմբռնումը զանազանում է միւս պատւիրակութիւնների ըմբռնումից : Այդ չափանիշով խորհրդային պատւիրակութիւնն թոյլ է տալիս իրեն մօտենալ Ֆրանսիական առաջարկութիւններին, որոնք արժանի են աւելի քան պատահական անդադարձումների : Այսպիսով խորհրդային պատւիրակութիւնն, ի նշան յարգանքի, արձագանքում է Ֆրանսիական պատւիրակութեան հրաւերին, ջննդատելու եւ ջննարկելու նրա առաջարկութիւնները : Սպառազինումների կրճատման տեսակէտից Ֆրանսիական առաջարկութիւնները հազիւ թէ մեզ մօտեցնեն նպատակին, քանի որ դրանք առաջադրւում են, որպէս սպառազինման կրճատման նախնական պայմաններ Ֆրանսիայի կողմից : Պայմանների ջննարկումը ներկա համաժողովին փաստացիօրէն կը դարձնէր սպառազինումների կրճատման ապագա համաժողովի նախապատրաստական մի համաժողով, որը պակաս ժամանակ չէր պահանջի քան նախապատրաստական Յանձնաժողովը : Ֆրանսիական առաջարկութիւններն ինձ ամենից աւելի հետաքրքրում են պատերազմի վտանգի դէմ ապահովութիւն ստեղծելու ընդունակութեան տեսակէտից : Ֆրանսիական պատւիրակութեան առաջարկութեան էութիւնն ինչօ՞ւմն է : Նա առաջարկում է ստեղծել մի նոր բանակ, որը կազմւած կը լինի որոշ քանակութեամբ ռազմական ուժակիրներից, տեղաւորւած զանազան երկրներում կամ հաւաքւած մի վայրում, նրամանապէս որոշ քանակութեամբ զօրքից, տեղաւորւած

ղանազան երկրներում — յատուկ նպատակադրութեան համար: Կ'ստեղծուի որոշ բանակ, որը յարձակման ենթակա ճանաչւած պետութիւնների ուժերին կը միացուի: Նըշանակուած է սա, արդեօ՞ք, որ թշնամի պետութիւնն անպայման կը հրաժարուի յարձակումից: Իսկի էլ չէ: Յարձակող կողմը հարկադրւած կը լինի միայն նախօրօք հաշի առնել միջադգային բանակի ուժը: Պաշտպանող պետութեան կողմն անցած մի քանի հարիւր հազար զօրքը վճռական նշանակութիւն չի կարող ունենալ: Միջադգային բանակը, ոչ միայն չի կարող կանխել պատերազմը, այլ եւ ոչ միշտ կ'ապահովի յաղթանակը պաշտպանող կողմի համար: Ի՞նչ երաշխիք կա, որ այդ միջադգային բանակը կը մասնակցի դէպքերին, եւ այն էլ իր ժամանակին, քանի դեռ կոնֆլիկտի թոյլ մասնակիցը վերջնականապէս չի ջախջախուել: Ի՞նչ երաշխիք, որ յարձակող կողմն իսկապէս կը դռնուի եւ նա կը ճանաչուի յարձակող կողմ, որն իսկապէս յարձակուողն է: Ի՞նչ երաշխիք, որ այն հին կամ նոր միջադգային կազմակերպութիւնը, որի ղեկավարութեան ներքո կը դռնուի միջադգային բանակը, կարող կը լինի կամ կը ցանկանա որոշել մեղաւոր կողմը եւ նրան զգացնել տալ իր ունի ուժը: Ի՞նչ երաշխիք, որ միջադգային բանակը չի օգտագործուի այս կամ այն պետութեան շահերի համար, որը սեպարատ միութիւններով, անտանտաներով, համաձայնութիւններով ղեկավար դիրք կ'ապահովի իրեն համար. միջադգային կազմակերպութեան մէջ այդպիսի միութիւնների արդեւման մասին ոչինչ չի ասուած: Կարելի՞ է սպասել, որ պետութիւնները ներշնչուեն անհրաժեշտ վստահութեամբ դէպի միջադգային կազմակերպութիւնները, դէպի նրանց անաչառութիւնը, որպէսզի նրանց վստահանան իրենց ապահովութիւնը, նրանց տրամադրութեան տակ դնեն իրենց արդգային զօրքը:

Հարկաւոր է ուղղակի ասել, որ պատերազմի վտանգից ապահովելու տեսակէտից Փրանսիական առաջարկութիւնները մեծ կասկած են առաջ բերում: Խորհրդային պատերազմութեան մէջ աւելի ամրանում է այն համոզումը, որ խաղաղութեան կազմակերպման միակ միջոցը հանդիսանում է ընդհանուր լիակատար զինաթափութիւնը: Միտն կը լինի այստեղից եղբակացնել, որ խորհրդային պատերազմութիւնը ժխտում է խաղաղութեան ամրապնդման ուրիշ բոլոր միջոցների օգուտն ու նշանակութիւնը: Խորհրդային կառավարութիւնը մասնակցելով մի շարք կազմակերպութիւնների միջադգային կոնգրեսներին, այնտեղ մտցրած իր առաջարկութիւններով ապացուցել է միջադգային գործակցութեան իր պատրաստակամութիւնը: Խորհրդային պատերազմութիւնը, սրանից 4 տարի առաջ, Նախապատրաստական Յանձնաժողովում մտցրեց լիակատար զինաթափման դաշնագրութեան նախագիծը, առաջարկելով այդ զինաթափութիւնը իրագործել 4 տարում:

Կարո՞ղ է որեւէ մէկը ձեզանից ժխտել, որ եթէ այդ առաջարկութիւնը ընդունէր, այն ժամանակ տեղի չէին ունենա ներկա դէպքերը Հեռաւոր Արեւելքում, չէր լինի նոր համաշխարհային պատերազմի վտանգը, եւ ամբողջ աշխարհի ալրած ճգնաժամն, անկասկած, իր ներկա սրբութիւնը չէր ունենա: Ընդհանուր զինաթափման պլանը իր պարզութեամբ, հեշտ իրագործելիութեամբ եւ իրադործման հսկողութեան հեշտութեամբ դրականապէս դանազանուած է միւսներից: Միայն լիակատար զինաթափութեամբ հնարաւոր կը լինի բոլոր երկիրների համար ձեռք բերել միանման ապահովութիւն եւ պայմանների հաւասարութիւն, ինչ վերաբերում է հսկողութեան; ապա միանգամայն ակնյայտ է, որ աւելի հեշտ է մերկացնել այն պետութիւնը, որը հակառակ միջադգային դաշնագրու-

թեան՝ տանկեր, թնդանօթներ, դնդաջիրներ եւ ուրա-
կիրներ է շինում, քան նկատել այդ զէնքերի մի քանի տո-
կոսային յաւելում դաշնազրութեան սահմանադժումների
դիմաց :

Խորհրդային պատերազմութիւնը համաձայն է զըն-
նարկելու ամեն տեսակ առաջարկութիւններ սպառազին-
ման կրճատման ուղղութեամբ: Նախապատրաստական
Յանձնաժողովի մշակած դաշնազրութեան նախազիծը մի-
անգամայն անբաւարար համարելով, խորհրդային պատ-
երազմութիւնը կը պաշտպանի սպառազինումների մաս-
նակի կրճատման իր սեփական նախազիծը, որը նա հա-
մարում է որպէս լիակատար զինաթափութեան առաջին
էտապը: Նախապատրաստական Յանձնաժողովի խորհրդ-
դային պատերազմութիւնն առաջարկում էր սպառազին-
ման ամենաազդեակ տեսակների լիակատար ոչնչացու-
մը, որոնց թւում 1) տանկերը, մեծ ուժի հեռաձիգ թըն-
դանօթները, 2) 10 հազար տոննից բարձր տարողութեան
նավանաւերը, 3) 12 դույմից աւելի ծովային քնդանօթ-
ները, 4) օդանաւակիրները, 5) ռազմական դիրիժաւերնե-
րը, 6) ծանր ուրաձիգ օդանաւերը, օդանաւային ռում-
բերի եւ օդանաւերից նետուղ այլ ոչնչացնող նիւթերի բո-
լոր պաշարները, 7) ֆիւիական, հրային, բակտերիոլո-
գիական յարձակման սարքաւորման բոլոր միջոցները:
Խորհրդային պատերազմութիւնն առաջարկում էր օդային
ուրաձիգութեան լիակատար արգելումն: Այդ բոլոր ա-
ռաջարկութիւններն իրենց ուժի մէջ են մնում եւ այս հա-
մաժողովի համար: Խորհրդային պատերազմութիւնը
հաստատակամօրէն առաջարկում է զինաթափութեան
կրճատման պրոգրեսիվ յարաբերական մեթոդը — արտօ-
նութիւններ վերապահելով յարձակման ենթակա ամենա-
թոյլ պետութիւնների:

Ապահովութեան տեսակէտից իմ ներկայացրած պե-

տութիւնն աւելի վտանգաւոր դրութեան մէջ է գտնուում,
քան միւսները: Չնայած դրան, ես լիագորած եմ այստեղ
յայտարարելու իմ ներկայացրած երկրի պատրաստակա-
մութեան մասին՝ զինաթափելու այնպիսի չափով եւ այն-
պիսի արագութեամբ, որպիսի չափի եւ արագութեան հետ
կը համաձայնեմ միւս պետութիւնները եւ առաջին հեր-
թին անմիջապէս սահմանակից պետութիւնները: ԽՍՀՄ.
ՊԱՏԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, — ԽՍՀՄ.
ՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՆՊԱՏԱԿ ԳՆԵԼՈՎ ՍՈՑԻԱԼԻՉ-
ՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԽՍՀՄ.ՍԵՒՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՐԻՏՈ-
ՐԻԱՅՈՒՄ, ԱՅԺՄ, ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄԵԱ ՊԱՆԻ ՅԱՋՈՂ
ԱՒԱՐՏՄԱՆ ՄՈՄԵՆՏԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒ-
ԹԵԱՆ ԲՈՂՈՐ ԲՆԱԳԱՒԱՆՆԵՐՈՒՄ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՆԻԱ-
ՃՈՒՄՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՑ ՅԵՏՈ, ԿԱՐԾՈՒՄ Է, ՈՐ
ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՑՈՒՑԻԱԾ ԵՒ ԱԿՆՅԱՑՏ Է ԱՅՆ,
ՈՐ ԽՍՀՄ.ՍԵՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԻՐ ԱՌԱՋ
ԴԻՒԱԾ ԽՍՀՄ.ՍԵՒՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԶԻ ՊԱՀԱՆ-
ՋԸՒՈՒՄ ՈՉ ԻՐ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄՆ ԵՒ ՈՉ
ԷԼ ՈՒՐԻՇ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՒ-
ԹԻՒՆԸ: ԱՅԳ ԽՍՀՄ.ՍԵՒՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱ
ԿԱՐԻՔ ՉԷՐ ՋԳՈՒՄ ՈՉ ԲԱՆԱԿԻ, ՈՉ ՌԱՋՄԱՆԱԻԱՏՈՐ-
ՄԻՂԻ, ՈՉ ՕԳԱՑԻՆ ՌԱՋՄԱՆԱԻԱՏՈՐՄԻՂԻ ԵՒ ՈՉ ԷԼ,
ՈՒՐԻՇ ՍՊԱՌԱՋԻՆԻԱԾ ՈՒԺԵՐԻ: ՆՐԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է
ՄԻԱՅՆ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ, ՈՐ ԽՍՀՄ.ՍԵՒՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻՆ ՈՉ ՈՔ ԶԻ ՍՊԱՌԱՆԱ, ՈՐ ԻՐ ՆԵՐՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻՆ ՈՒՐԻՇ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՄԻՋԱՄՏԻ,
ՈՐ ԻՐ ԽԱՂԱՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԶԻ
ԽԱՆԳԱՐԻԻ ԴԻՍԻՑ: Նա այդ վստահութիւնը կ'ունենա,
եթէ միւս պետութիւնները կը հրաժարուեն իրենց սպառա-
զինած ուժերից: Պէտք է վերացնել պատերազմի վտան-
գը: Այդ վտանգը կարող է վերացնել միմիայն ամեն տե-

սակ սպառազինութիւններից լիակատար եւ ընդհանուր հրաժարման դէպքում :

Թոյլ ենք տալիս մեզ յոյս ունենալու , որ պետութիւններին այստեղ ներկա գտնուող ամենապատասխանատու ներկայացուցիչները մեր արտայայտած մտքին կը վերաբերեն ամբողջ լրջութեամբ , որպիսին արժանի է ժողովրդներին պատերազմի վտանգից իսկապէս ապահովելու , իսկապէս խաղաղութիւն հաստատելու պրոբլեմը :

ԳՈՐԾԱԾԻԱԾ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

Էտապ — Հանգրւան

Ամենագրեսիվ — ամենալարձակողական

Բակտերիոլոգիկական — մանրէաբանական

Պրոգրեսիվ — յառաջդիմական

Տերիտորիա — երկրամաս

Մոմենտ — բոլոր

Պրոբլեմ — խնդիր

Լոգուց — նշանաբան

Միլիտարիզմ — սպառազինութիւն

Ինստիտուտ — հաստատութիւն

Տերիտորիալ — հողային

Կոնֆլիկտ — ընդհարում

Ռէալ — իրական

Սեպարատ — առանձին

Անտանտ — համաձայնութիւն

ՄԱՔՍԻՄ ԼԻՏՎԻՆՈՎԻ ՃԱՌԸ ԺՆԵՎԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒ
Ի ՊԱՏԻ ԻՐԵՆ ՏԻԱԾ
ՆԱԽԱՃԱՇԻՆ

ՄԱՔՍԻՄ ԼԻՏՎԻՆՈՎԻ ՃԱՌԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻԻ ԻՐԵՆ ՏԻԱԾ ՆԱԽԱՃԱՇԻՆ


Ժնեվի Ամերիկեան Կոմիտէն, ժնեվի միջազգային ա- կումբի հետ միատեղ, որ միաւորում է պայքիֆիստական տարրերին, հերթական նախաճաշի հրաւիրեց Ընկ. Լիտ- վինովին, որպէս պատուաւոր հիւրի: Դահլիճը սովորակա- նից երկու անգամ աւելի էր լցւած: Ընկ. Լիտվինովի ճառը լսեցին լարւած ուշադրութեամբ: Ծնորհակալութիւն յայտնելով հրաւէրի համար, Ընկ. Լիտվինովը յայտա- րարեց.

«Ամերիկեան Կոմիտէի նախադահութիւնն աւելորդ անգամ յիշեցնում է ինձ, թէ որքան հեռու են լինում ի- րականութիւնից պաշտօնական շտամպը եւ արտայայ- տութիւնները: Պաշտօնապէս մեր երկրների՝ ԽՍՀՄ-ն եւ ՀԱՄՆ միջեւ յարաբերութիւններ գոյութիւն չունեն: Մինչդեռ մենք գիտենք, թէ ձեր երկրում ինչպիսի ահա- գին հետաքրքրութեամբ են հետեւում այն բոլորին, ինչ կատարւում է ԽՍՀՄ-ում»:

Բաւական է ասել, որ Մոսկվայում լրագրերի ամե- րիկեան մնայուն թղթակիցներ աւելի շատ կան, քան որ- եւէ այլ երկրից: Մեր մայրաքաղաքն ամեն տարի մեծ քա- նակով այցելուներ են դալիս Ամերիկայից, — աւելի քան նոյնիսկ եւրոպական երկրներից:

Վերջապէս մեր գործարաններում, նոր արդիւնաբե- րական դիզանտներում, ինչպէս նաեւ կոլտնտեսութիւն- ներում աշխատում են ահագին քանակութեամբ ամերիկե- ան մեքենաներ եւ տրակտորներ: Հազարաւոր ամերիկ-

1960 4 0 9 2
41977



եան ինժեներներ, տեխնիկներ եւ բանւորներ ակտիւ մասնակցում են խորհրդային շինարարութեանը: ԽՍՀՄ ժողովուրդները մեծ հետաքրքրութեամբ հետեւում են Ամերիկայի իրականութեանը, գրականութեանը եւ հոգեւոր կեանքին:

Երէկ ես լրագրերում կարդացի, — շարունակեց Ընկ. Լիտվինովը, — որ Շանկհայում, որտեղ կռիւներ են տեղի ունենում, կենտրոնացած է 165 հազար չինական զօրք: Պէտք է ենթադրել, որ այնտեղ կա դրանից ոչ սլակաս, եթէ ոչ աւելի ճապոնական զօրք: Այսպիսով, տեղի են ունենում ճակատամարտեր 100 հազարանոց բանակների միջեւ, մինչդեռ պաշտօնապէս պատերազմ ընաւ չկա: Ահա եւս մի օրինակ, թէ ինչպէս պաշտօնական վկայութիւնները, պաշտօնական ճանաչումները յետ են մնում իրականութիւնից: Երբ այստեղ մարդիկ հարցնում են միմեանց տպաւորութիւնները զինաթափման կոնֆերենցիայի առաջին շաբաթների աշխատանքներից, ընդունւած է պատասխանել լաւատեսութեան ոգով, մատնանշելով ըսկըզնաւորումը, անգամ կոնֆերենցիան թերահաւատօրէն գլխի օրօրումով դիմաւորող պեսիմիստների պարտութիւնը:

Եթէ ես կարողանայի հաւատալ ու մտածել, թէ լաւատեսութեամբ խկապէս կարելի է օգնել կոնֆերենցիայի յաջողութեանը, ծառայութիւն մատուցել աշխարհի զինաթափման դործին, հաւատացէք ինձ, դուք ինձանից կը լսէիք ամենասանգովինիկ ճառ, լիքը ամենալարդադոյն նախազուակութիւններով:

Գոյութիւն ունի հիւանդութիւն բժշկելու մի որոշ սխտեմ՝ հանդուցեալ պրոֆեսոր Կուէյի սխտեմը, որով մարդ կարող է բժշկել ուղածդ հիւանդութիւնից, եթէ նա օրը-օրին, ինքն իրեն համար կրկնի, թէ ինքը զնալով լաւանում է, թէ ինքը բոլորովին հիւանդ չէ: Ես

պատրաստ կը լինէի ըստ այդ սխտեմի ամեն ըստ կրկնել ինձ եւ ուրիշներին կոնֆերենցիայում, թէ արդէն ամեն ինչ բարեբաստիկ վիճակումն է, թէ օր-օրի վրա մենք զինաթափում ենք, աւելի ու աւելի մեծ չափով, թէ Հեռաւոր Արեւելում վերահաստատել է խաղաղութիւնն ու հանգստութիւնը, թէ Չինաստանի քաղաքական անկայսութիւնը խախտւած չէ, թէ Մանչուրիան Չինաստանից բաժանելուն վերաբերող հարցադրութիւնը միայն բոլորովին պատահաբար է գուգադիպել Մանչուրիան օտարերկրեա զօրքերով օկուպացիայի ենթարկելուն, թէ բարոյական զինաթափումը բթացրել է նապոմական եւ չինական սւիմները, ու հրավառութեան է վերածել գնդակները, արկերը, ռումբերը, նռնարկները (ծիծաղ):

Չեմ կամենում վնասել հանդուցեալ Կուէյի եւ բժշկութեան ասպարիզում նրա հետեւորդների ռեպուտացիային, բայց պէտք է ասեմ, որ սոցիալ-քաղաքական ասպարիզում ես այդ սխտեմին չեմ հաւատում: Այս պատարիզում ինձ թւում է, միշտ չէ, որ այդ սխտեմը կայտառութիւն է ներշնչում, միշտ չէ, որ ակտիվութեան խթան է հանդիսանում»:

Այնուհետեւ Ընկ. Լիտվինովը մատնանշում է, թէ չի տեսնում պատճառներ, որոնք իրեն աւելի լաւատեսութիւն ներշնչէին, քան մինչեւ կոնֆերենցիան ու յայտարարում է. —

«Եթէ նախապատրաստական յանձնաժողովում խօսւում էր սպառազինման կրճատման ու սահմանափակման մասին, ապա բուն կոնֆերենցիայում մենք լսեցինք ըստ սպառազինումն աւելացնելու պահանջներ, որոնք բղխում էին ոչ ամենաթոյլ եւ անդէն պետութիւններից: Ինձ թւում է, որ այս պայմաններում աւելորդ լաւատեսութեան պատճառներ առայժմ չկան: Առայժմ մեր կողք լիակատար եւ ընդհանուր զինաթափման վերաբերեալ պատե-

րազմի դէմ այդ միակ երաշխիքը՝ դեռ ոչ մի արձագանք չգտաւ կոնֆերենցիայում: Կոնֆերենցիա մտցրած նոր առաջարկները երկկող են ներշնչում, թէ չլինի՞ արդեօք հէնց ինքը կոնֆերենցիան հեռացւի իր ուղիղ ճանապարհից դէպի կողմնակի շաւիղները: Մեզ միշտ թւում էր, թէ զինաթափում ասելով, կարելի է հասկանալ միայն կամ սպառազինուածների վերացումը, կամ կրճատումը, մեզ միշտ թւում էր, որ յամենայն դէպս կոնֆերենցիան պէտք է զբաղւի միայն սպառազինուածների հարցով: Բայց ըստ երեւոյթին բոլորն այսպէս չեն հասկանում կոնֆերենցիայի խնդիրները: Արդէն նախապատրաստական յանձնաժողովում փորձեր արեցին փոխարինելու այդ հարցն անվտանգութեան հարցով:

Անվտանգութեան դէմ հազիւ թէ մէկն ու մէկն առարկի, չի առարկում նրա դէմ նաեւ խորհրդային պատուիրակութիւնը, քայց մենք ասում ենք, որ երկրների մեծ մասում գոյութիւն ունեցող սոցիալ-սոցիալական պայմաններում անվտանգութիւնն ապահովւած կը լինի միայն այն դէպքում, երբ ոչ ոք չի կարողանա յարձակւել, երբ այլեւս յարձակւելու գործիք չի լինի, երբ օտարների հոգերն օկուպացիայի ենթարկելու գործիք չի լինի, երբ ուրիշ ժողովուրդներին ստրկացնելու գործիք չի լինի: Հակադէր կոնցեսիայի կողմնակիցներն անվտանգութիւնը տեսնում են միայն պատերազմը շահելու շանսերն աւելի կամ պակաս չափով հաւասարելու մէջ՝ սպառազինուած վերադասաւորելու, կամ նոյնիսկ աւելացնելու միջոցով: Վերջիվերջո ինչի՞ է յանգում այս կարգի անվտանգութիւնը, եթէ ոչ նախապատերազմեան դիպլոմատիային ղեկավար սկզբունքին՝ ուժերի հաւասարակշռութեան հին սրաղէցիտն սկզբունքին: Այդ սկզբունքը չփրկեց աշխարհըն աւանդաժան պատերազմներից. լաւագոյն դէպքում այն միայն աւելացրեց մի շարք ժողովուրդների անվտանգ-

գութիւնը, ի հաշիւ միւսների եւ ընդհանուր առմամբ ամբողջ աշխարհում թողեց աւելի պակաս վստահութիւն դէպի անվտանգութիւնը, քան այդ ծանօթ էր մինչեւ պատերազմը: Հարկաւոր էր արդեօք ասլրել համաշխարհային պատերազմի բոլոր սարսափներն ու արհաւիրքները, 13 տարւա ընթացքում նախապատրաստել կոնֆերենցիային, մշակել եւ կնքել ամեն տեսակ պակտեր, միջազգային համաձայնագրեր, վերջ ի վերջո յանգելու համար միջազգային դիպլոմատիայի հին սկզբունքներին՝ միայն փոքր ինչ ձեւափոխւած ու համեմաւծ նոր լողունքներով: Մենք դեռ եւս ոչինչ չենք արել Ֆրիդլանդի գիւնաթափման համար, չենք պակասեցրել դոյութիւն ունեցող զինուորական միացումները ոչ մի միաւորով, այն ինչ մեզ առաջարկում են զբաղւել բարոյական զինաթափութեամբ: Գարձեալ պէտք է ասենք, ո՞վ կարող է առարկել բարոյական զինաթափութեան դէմ շովինիզմի, ջինգոիզմի քարոզի ու չընչացման դէմ մամուլում, դրականութեան մէջ, կինեմատոգրաֆիայում, դասագրքերում, խաղալիքների միջոցով եւ այլն:

Ո՞վ կարող է առարկել կեղծ փաստաթղթերից օգտուելն արգիլելու դէմ:

Ամենից քիչ խորհրդային պատուիրակութիւնը կարող է առարկել այդպիսի առաջարկների դէմ: Որովհետեւ հազիւ թէ որեւէ մէկ ուրիշ երկրի դէմ գործ դրւած լինի այնքան բարոյական թոյն, մամուլում, ճառերում եւ նոյնիսկ պաշտօնական փաստադրերում, որքան ԽՍՀՄ-ի դէմ, որպէս վկաներ, ես կարող էի կանչել ձեզ՝ ՀԱՄՆ քաղաքացիներիդ: Ձեզ աւելի լաւ է յայտնի, քան որեւէ ուրիշին, թէ բարոյապէս ինչպէս են թունաւորում յարաբերութիւնները մեր երկրների միջեւ, կեղծիքի, զլրպարտութեան, կաղմակերպւած կամպանիաների, կեղծ փաստադրերի միջոցով, որոնք խրախուսւում են շահա-

գըրգուած առեւտրական բանկային, քաղաքական ավան-
տիւրիստների շրջանների կողմից հակալեզատիտական է-
միգրացիայի կողմից, որը պատրաստ է վաճառել այսօր
Չինաստանին, վաղը Ճապոնիային, վաղը չէ միւս օրը՝
ուժ կամենաք: Մե՞նք առարկենք այն միջոցների դէմ, ո-
րոնց նպատակն է պայքարն ընդդէմ դրչի եւ խօսքի այդ
տեսակ աւաղակները: Բայց այս բոլորն ունի միայն ամե-
նափոքը կապ սպառազինման վերացման կամ կրճատման
հետ: Ես պնդում եմ, որ հէնց սպառազինումների առկա-
յութիւնը, մեծ սպառազինումների առկայութիւնը, —
այդ սպառազինումների, ինչպէս նաեւ դաշինքների, հա-
մաձայնութիւնների օգնութեամբ յաջող, շահաւէտ պա-
տերազմներ մղելու հնարաւորութեան յոյսն է, որ ստեղ-
ծում է հէնց այն շովինիզմը, մտքերի այն թունաւորումը,
որ մեզ առաջարկում են վերացնել միայն վարչական մի-
ջոցներով: Չէ՞ որ չի կարելի ժխտել, որ կապիտալիստա-
կան պետութիւնների միջեւ դոյութիւն ունեն խորը հա-
կասութիւններ — տնտեսական, քաղաքական, անդամ
տերրիտորիալ:

Կան երկրներ, որոնք դտնում են, թէ հարեւան պե-
տութիւնները ոչ արդարացիօրէն, ապօրինի են օկուպա-
ցիայի ենթարկում իրենց պատկանող հողերը: Այստեղից
— ազիտացիան յանուն խախտած իրաւունքների վերա-
կանգնման, յանուն սահմանների ուղղման եւ այլն:

Բայց այդ հակասութիւններն անկարելի է վերացնել
նրանով, որ վիճելի հողերի երջանիկ տէրերը կ'ասեն ի-
րենց հարեւաններին՝ «Ներեցէ՛ք մեր պատճառած վիրա-
ւորանքները, ինչպէս որ մենք ենք ներում ձեր պատճա-
ռածները»: Այսպիսով պատմութիւն չի ստեղծուում: Մի-
ջազգային յարաբերութիւններն այսպիսով չեն փոխուում:
Մենք պէտք է հասնենք այնպիսի վիճակի, որպէսզի այդ
անբաւականութիւններն առաջ չբերեն դրութիւնը ռազ-

մականի փոխելու փորձեր. այդ կարող է ձեռք բերել մի-
այն ռազմական ուժի վերացմամբ:

Քանի այդ ռազմական ուժը դոյութիւն կ'ունենա, հը-
նարաւորութիւն կը մնա հասնելու դերազանցութեան հա-
րեւանների նկատմամբ՝ սեփական սպառազինումներն ա-
ւելացնելու, թէ քաղաքական կոմբինացիաների միջոցով
միջազգային կազմակերպութիւններում կամ նրանցից
դուրս:

Քանի դեռ դոյութիւն ունի զինւած ուժը, մենք ակա-
նատես կը լինենք միլիտարիզմին եւ շովինիզմին դաստիա-
րակութեան ասպարիզում:

Բարոյական զինաթափումով դործին չես օգնի: Այն
պէտք է եւ անխուսափելիօրէն զուգակցի ռազմական զի-
նաթափմանը, բայց ոչ մի դէպքում չի կարող փոխարե-
նել նրան: Երբ մենք ձեռք բերենք էական յաջողութիւն-
ներ իսկական զինաթափման գործում, այն ժամանակ կա-
րելի կը լինի քննարկել բարոյական զինաթափման միջոց-
ները եւ դրանց ապահովւած կը լինի որոշ յաջողութիւն:
Իսկ առայժմ, մեր կարծիքով, կոնֆերենցիան չպէտք է
ծախսի իր եռանդուն ժամանակը որեւէ այլ բանի վրա,
բացի այն խնդրի լուծումից, որի համար նա գումար-
ւած է:

Ինձ կարող են ասել, թէ յաճախ հասարակական կար-
ծիքը հարկադրում է կառավարութեանը պահել ռազմա-
կան ուժ, կիրառել շովինիստական քաղաքականութիւն,
եւ քանի որ հասարակական կարծիքն աւելի լուսաւոր է
դառնում, ուստի եւ նրա ճնշումը կառավարութեան վրա
թուլանում է եւ աւելի մատչելի կը լինի զինաթափման
դադափարի համար: Ես չեմ կարող բաժանել այդ տեսա-
կէտը: Շովինիզմի, ժողովրդատեսացութեան, մի կարգ ժո-
ղովուրդներին միւսների դէմ լարելու, ղէնքի կոչելու
կամպանիաները երբեք չեն բղխել ժողովրդական մաս-

սաների խորքերից (ծափահարութիւններ) : Այդ կամպանիաները կազմակերպւում են արհեստականօրէն, դրանց սնում են պատերազմների նախապատրաստութեան, զէնքի արտադրութեան, ռազմական արդիւնարերութեան դործով շահադրդուած փոքրաքանակ խմբակներ, որոնք յոյս ունեն շահոյթներ կորզել պատերազմից կամ նրա արդիւնքներից : Այդ կամպանիաները մղւում են ժողովրդական մասսաների գիտակցութիւնը թունաւորելու միջոցով : Զրկեցէ՛ք այդ խմբերն իրենց պատւանդանից, հեռացրէ՛ք նրանց ռազմարդիւնաբերութիւնից, ոչնչացրէ՛ք այդ արդիւնաբերութիւնը, ոչնչացրէ՛ք պատերազմի յայտը եւ պատերազմից շահելու յայտը — եւ այդ կամպանիաներն իրենք իրենց կը դադարեն, որովհետեւ կը դառնան անհոգ եւ այն ժամանակ վրա կը հասնի իսկական բարոյական զինաթափումը՝ առանց յատուկ վարչական միջոցների : Այսպիսով, բարոյական զինաթափումը կարող է ձեռք բերել միայն ֆիզիքական զինաթափման միջոցով, այսինքն՝ ռազմական սպառազինումների վերացման միջոցով :

Վերացրէ՛ք նախ իսկական զինւորներին, մահաբեր զինւորներին, իսկ խաղալիք զինւորների, անադից շինւած զինւորների հետ մենք գլուխ հանելու ժամանակ կ'ունենանք : Նման առաջարկները, որոնք հարազատ չեն իսկական զինաթափմանը, ոչ մի դէպքում չեն կարող լաւատեսութիւն առաջ բերել : Նրանց հեղինակները մեկնում են կոնֆերենցիայի արդիւնարերութեան վերաբերեալ ունեցած իրենց վստահութիւնից եւ վաղօրօք ասում են մեզ՝ կոնֆերենցիան չի յաջողեցնի ոչ մի զինաթափում, կամ նոյնիսկ զինաթափման կրճատում : Ուրեմն, եկէ՛ք ըզբաղւենք այլ մանր դործերով եւ նրանց միջոցով ապահովենք որոշ յաջողութիւն կոնֆերենցիայի համար : Զբաղւել այդ առաջարկով այժմ եւ եթ' կը նշանակէր վաղօրօք

յայտարարել զինաթափման կոնֆերենցիայի սնանկութիւնը, յայտարարել, թէ նա ի վիճակի է վճարել ռուբլու դրամաց միայն մի կոպեկ : Թերեւս դուք այժմ հասկանաք, թէ ես ինչո՞ւ եմ զգուշանում լաւատես նախադուշակումներից : Ես կը խնդրէի ձեզ չվերադրել խորհրդային պատւիրակութեանը միակողմանիութիւն, չկասկածել նրան այն բանում, թէ նա հայեացքը յառել է մի կէտի եւ ոչինչ այդ կէտից դուրս չի կամենում տեսնել ու լսել : Ես ձեզ ասացի, որ մենք հասկանում ենք նշանակութիւնն անվտանգութեան, բարոյական զինաթափման եւ ուրիշ լաւ բաների, որոնք կարող են օգտագործել :

Ես կ'ողջի մատնանչել, որ անվտանգութեան բացակայութիւնը յաճախ տեսնում են ոչ այնտեղ, որտեղ պէտք է տեսնել. — կոնֆերենցիայի մի քանի պատւիրակներ անբաւարար անվտանգութեան պատճառը տեսնում են նոյնիսկ այն բանում, որ խորհրդային Միութիւնն Ազգերի Լիգայի կաղմի մէջ չի մտնում : Ամենից նշանակալիցն այն է, որ այդ մատնանչումները բղխում էին այնպիսի պետութիւնների ներկայացուցիչներից, որոնք իրենք ոչ մի յարաբերութիւն չեն պահպանում ՌՍՀՄ-ի հետ : Այդ նոյնքան տարօրինակ է, որքան եթէ ես չկամենալով ոչ մի ծանօթութիւն պահպանել մի մարդու հետ, սկսէի նըրան իմ ակումբը կանչել (ծիծաղ) : Իսկ եթէ սպառազինումներից դուրս փնտռեն քաղաքական անհանգստութեան, անվստահութեան, անկայունութեան մթնոլորտ ստեղծող Փակտորներ այս մենք այդպիսիք աւելի շուտ կը գտնենք այն կտրւածութեան մէջ, որ գոյութիւն ունի մէկ կողմից բաղմաթիւ պետութիւնների եւ միւս կողմից՝ երկու մայր ցամաքներում տարածւող 160 միլիոն մարդուց բաղկացած ժողովրդի միջեւ :

Բաւական է յիշել Ռադաղական ովկիանոսի աւազանում ներկայումս տեղի ունեցող անցքերը. Ռադաղական

ովկրանեան երեք խոշորագոյն երկրներէնց հէնց Խորհրդա-
դաշին Միութիւնը, Զինաստանը եւ ՀԱՄՆ են, որ միմ-
եանց հետ յարաբերութիւն չունեն: Ինձ թուում է, որ կը-
ռահման մեծ շնորհք եւ քաղաքական ներթափանցութիւն
չի պահանջուում հասկանալու համար, թէ այդ հանդա-
մանքն ինչ չափով նպաստեց այժմեան Հեռաւոր Արեւել-
եան անցքերին, եթէ ոչ ուղղակի առաջ բերեց այդ անց-
քերը, — հասկանալու համար, որ եթէ այդ հանդամանքը
չլինէր, ապա կամ այդ տխուր անցքերը տեղի չէին ունե-
նա բոլորովին, կամ միանգամայն այլ ընթացք կ'ունենա-
լին:

ԳՈՐԾԱԾԻԱԾ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

- Պացիֆիստ - խաղաղասէր
- Շտամպ - երեւոյթ, տեսք
- ՀԱՄՆ - Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներ
- Գիգամտ - հսկայ
- Պեսիմիստ - յոռետես
- Օկուպացիա - դրաւում
- Ռեպուտացիա - վարկ, անուն
- Դիպլոմատիա - դիւանագիտութիւն
- Տրագիցիոն - աւանդական
- Պակտ - համաձայնութիւն
- Շովինիզմ - թիւում ազգայնամոլութիւն
- Ջինգոիզմ - կոյր օտարատեացութիւն
- Կամպանիա - քեմիկէյն, արշաւ
- Աւանտիւրիստ - բախտախնդիր
- Տերրիտորիալ - հողային
- Կոմբինացիա - համադրութիւն
- Ֆակտոր - ազգակ

ՎԵՐՋ



ՊՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ՄԻԱՑԷՔ

ԲԱՆԻՈՐ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՕՐԿԱՆ Մ. ՆԱՀԱՆԳԱՑ ԿՈՄՈՒՆԻՍՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան \$2.00 վեցամսեա \$1.00

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան \$2.50 վեցամսեա \$1.50

SUBSCRIPTION RATES

AMERICA

One Year \$2.00 Six Months \$1.00

FOREIGN COUNTRIES

One Year \$2.50 Six Months \$1.50

PANVOR PUBLISHERS,

441 P. O. Box, Madison Sq. Station
New York, N. Y.

Telephone: BO gardus 4-5557





ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՒՈՎ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄԵԼԻԿ

Դիցարանական, պատմական, բժշկական, աստղագիտական, հասարակագիտական, գրական եւ այլ հազարաւոր բառերու բացատրութիւններ: Բառերէն ումանք մի քանի էջ հետաքրքրական ծանօթութեամբ: Խ. Հայաստանի մէջ ընդունած մի քանի հարիւր կրճատած բառերու պաշար: Գիրք եւ թերթ կարդացող ռուս անհատի համար անհրաժեշտ հատոր մը:

360 էջ, մանր գիրքերով: ԼԱԹԱԿԱԶՄ \$1.50
Դիմել «ԲԱՆԻՈՐ»-ի ՎԱՐՁՈՒԹԵԱՆ՝
Միմիայն կանխիկ Պատուէրներով

PANVOR PUBLISHERS,

441 P. O. Box, Madison Sq. Station
New York, N. Y.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՇԻՆԱՐԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԼՕԿԻ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ, ԹԻՒ 4

Նւիրած
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
11-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Եւ

— ԼՕԿԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ

Շքեղ Պատկերազարդ Տպագրութիւն

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ.— Փրոֆ. Յ. Տատուրեան, Փրոֆ. Լ. Արծրունի, Լ. Գազանեան, Օր. Աղանի Եկեան, Տիգրան Զաւէն, Ա. Նազարբէկ, Յ. Սանսիվաս, Ա. Մելիք, Տոֆ. Վ. Թաշեան, Տոֆ. Ա. Իգնատիոսեան, Փրոֆ. Գալպագեան, Սիտակ եւ ուրիշներ:

Գին 75 Սենթ

Դիմել ԼՕԿԻ Մասնահիւղերուն կամ Ամերիկայի Կեդր. Վարչութեան՝

AMERICAN COMMITTEE TO AID ARMENIA
31-33 East 27th Street, New York, N. Y.





ԿԱՐԴԱՑԷՔ Խ • ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՄՈՒԼԸ

Տեղեկանալու Համար

ԽՈՐՀ • ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԳԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԻԹԵԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

ՈՐԸ

Ձեր սիրտը պիտի լեցնե՛ւ ուրախութեամբ եւ հպարտութեամբ

Եւ հասկնալու աշխատանքական Հայաստանի իրական վերածնունդի արժեքն ու նշանակությունը

Խ • Հայաստանի Մամուլի եւ Գրականութեան համար դիմել ՀՕԿ-ի ԿԵԴՐ • ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

AMERICAN COMMITTEE TO AID ARMENIA


31-33 East 27th Street, New York, N. Y.

ԱՆԴԱՄԱԿՑԷ՛ ՀՕԿ-ԻՆ

Անդամակցել ՀՕԿ-ին կը նշանակե՛ անկեղծ եւ անվերապահ բարեկամն ըլլալ Խ • Հայաստանի:

Անդամակցել ՀՕԿ-ին կը նշանակե՛ Խ • Հայաստանի աշխատանքային գործազրկ հանդիսանալ, անոր դերմարդկային աշխատանքին մէջ՝ կերտելու նոր Հայաստանը — աշխատանքական հայրենիքը:

ԱՆԴԱՄԱԿՑԷ՛ ՀՕԿ-ԻՆ



« Ազգային գրադարան



NL0198038

327(47)

h-63